բասանաց, որ ամենայն դպիր աշակերտեալ կարի ծաղր Շարադրութեան իմոյ առնել, այլ միևնոյն ժամանակի 'ի վերայ իմ յանձն առի թէ ծաղր և թէ ամենայն նախատանաց բան 'ի արհեստաւորացէ մերմէ ելցէ, բաւական լինիցի յիս, զի սերմանեսցի սերմս բարի նախանձուս 'ի սիրտս նոցայ, որովհետև յինէն անհնարին եղև 'ի ոչ ոք իրօք լծորդել վարպետաց և դպրաց մերոց առ 'ի նախանձ այսպիսի գործոց, գուցէ զի սովաւ յարիցէ նախանձ սրտից նոցայ, զի լինիցին պատճառ լցուցանելոյ պակասութիւն առաջանալոյ բանի իմոյ, և փառաւոր առնելով ազգն և պատիւն Հայոց, և երանելի առն յայնմիկ, որ կամ նախանձահուզ լինելով և կամ յատկապէս սիրով ելցէ և շարադրեսցէ զամենայն զոր ինչ ասա և զոր ինչ նման սորայ բարութիւն որ յինէն անծանօթ, և երանի այնոցիկ որում գտանիցին 'ի ժամանակն զոսկէօծն յայնմիկ, զի տեսցեն նախանձ բարի առ այս մտածութիւնս յարուցեալ, և երանի ժամանակին յայնմիկ որում գծագիրք և շարադրօղք զիս մեղադիր առնելով՝ յիշեցուցանեն պակասութիւնն գրեցելոյն իմոյ դնելով պատճառ մեղաց իմոց, այսինքն առն վաճառական զի արդ կարէ կատար հասուցանել այնպիսի ծայրագոյն գործ, որ 'ի ժամանակս կենաց իւրոց եկաց միշտ վտարանդի իբր գործոյ սարդի, և փառաւորեսցի ոսկէ բերան դպիրն իմ քաղցրա-